

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷՍՄԱ
(ՈՂ(Մ)Ն)

ԹԵՔՎՈՂ / ՄՈՒՂԱԲ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ի՛րար-ն իրացվում է ուղղական, հայցական, սեռական հոլովներով դրվող անվանաձևերի և ուղղական, հայցական, ջսգմ հոլովներով դրվող բայաձևերի միջոցով: Հիշյալ լեզվական միավորները թեքվող 'մու՛րար են և ըստ նախադասության մեջ բառի դիրքի՝ լինում են մարֆու՛, մանսուր, մսջրուր և մաջզում՛: Մու՛րար միավորներն ուղղական հոլովով դրվող անվանաձևերն են. ներկա ժամանակի չհայցականացված և չջազմավորված բայերը, հայցական հոլովով դրվող անվանաձևերը, ներկա ժամանակի հայցականացված բայաձևերը, սեռական հոլովով դրվող անվանաձևերը և ներկա ժամանակի՝ ջսգմ հոլովով դրվող բայերը²:

Արարերենի լեզվաբանական ավանդույթում ի՛րար-ի իրացումն ապահովող լեզվական միավորների հիմնական մասը թեքվում է *ցուցիչների*, մնացած մասը՝ *հարֆ-երի* միջոցով³: *Ցուցիչների*⁴ միջոցով թեքվող մու՛րար միավորները եզակի թվով անվանաձևերն են. ներքին կազմավորման հոգնակի անվանաձևերը, արտաքին կազմավորման իզական հոգնակի անունները, ներկա ժամանակի՝ կցումից զերծ վերջավորությամբ բայաձևերը: Վերոնշյալ մու՛րար միավորների հիմնական մասի ուղղականի ցուցիչը դամմա-ն է (կարճ *ա* ձայնավորի համարժեքը) «հայցականինը՝ ֆաթհա-ն (կարճ *ա* ձայնավորի համարժեքը), սեռականինը՝ քասրա-ն (կարճ *ի* ձայնավորի համարժեքը), ջսգմ-ինը՝ սուքուն-ը (ձայնավորեցման դադարեցում): Անվածից բացառվում են հետևյալ լեզվական միավորները.

1. ձևաբանորեն արգելափակված եզակի (օրինակ՝ 'ajmaɬu) և ներքին կազմավորման հոգնակի անունները (օրինակ՝ madaarisu), որոնք անորոշ վիճակում ուղղական հոլովում վերջավորվում են դամմա ցուցիչով. դրանք անորոշ վիճակում սեռականի են վերածվում քասրա-ին փոխարինող ֆաթհա-ով, իսկ որոշյալում սեռականի են վերածվում

քասրա-ով՝ ստանալով եռսևհովտություն (ինչ վերաբերում է հատուկ անուններին՝ ապա յորանք սովորաբար որոշիչ հոդ՝ չեն ստանում պահպանելով երկհովտությունը⁶):

2. ներկա ժամանակի ձայնավորով վերջավորվող բայաձևերը, յրանգ ջազմ-ը իրացվում է սղմամբ/հազֆ-ով՝ սուքուն-ի փոխարեն (օրինակ՝ lam 'ansa):

3. արտաքին կազմավորման իզական հոգնակի անունները՝ (օրինակ՝ mudarrisaatun). որոնք հայցականի են վերածվում ֆաթհա-ին փոխարինող քասրա-ով:

Արտաքին կազմավորման իզական հոգնակի անունների ի՛րաբ-ով է իրացվում հետևյալ յոթ տեսակի անվանաձևերի ի՛րաբ-ը.

1. իզական անձնանունների հոգնակին (օրինակ՝ Zaynabaatun)

2. նկարագրական կառույցում նկարագրվողի դիրքում հանդես եկող անշունչ հոգնակի անվան որոշիչը /սիֆա-ն (օրինակ՝ qutubun jadiidaatun)

3. անշունչ փաղաքշական անունների հոգնակին (օրինակ՝ durayhimaatun)

4. 'ibnun անվան իզական սեռի ձևի ('ibnatun) հոգնակին (banaatun) «ծսս անվան իզական սեռի ձևի (ḡaatun) հոգնակին (ḡawaatun) և 'uwsuluu հոգնակի անվան իզական սեռի ձևը ('wulaatun)»

5. քա՛ մարքուտա-ով վերջավորվող ոլտշ անունների հոգնակին (օրինակ՝ tilmiiḡaatun)

6. իզականի ալիֆ մակսուրա-ով կամ մամդուդա-ով վերջավորվող անունների հոգնակին (օրինակ՝ hublaatun)

7. հնգատառ անունների հոգնակին (օրինակ՝ 'istablaatun. իսկ որոշ անունների հոգնակին էլ նշված կերպով կազմվում է միայն բարեհնչության նկատառումներով. օրինակ՝ 'ummaḡaatun):

Վերոհիշյալ հոգնակիի ի՛րաբ-ի նմանությամբ է իրացվում նաև ուղղական հոլովում մեկ քասրա-ով վերջավորվող որոշ անձնանունների ի՛րաբ-ը⁷:

Ցուցիչների փոխարեն *հարֆ-երով* քերվող մու՛րաբ միավորներ են երկակի թվով անվանաձևերը⁸ և յորանց նմանվող անունները. արտաքին կազմավորման արական հոգնակի և յորանց նմանվալ անվանաձևերը, Հինգ անունները. Հինգ բայաձևերը:

Երկակի թվով անունների ուղղականը կազմվում է ալիֆ-ով (երկար ա ձայնավորի համարժեքը). հայցականը և սեռականը ֆաթհա-ով նախորդված սուբյեկտի կողմից կազմվում է (կիսաձայնի համարժեքը) (օրինակ haytaani-baytayni): Երկակիին նմանվող անուններն են.

1. qilaa, qiltaa¹⁰ «'itnaani, 'itnataani, lintaani»

2. ինչպես և. այսպես կոչված. երկակի թվով անձնանունները (օրինակ Zaydaani):

Արտաքին կազմության արական հոգնակի անունների¹¹ ուղղականը կազմվում է. դամմա-ին փոխարինող ուատ հարֆով (երկար ա ձայնավորի համարժեքը). հայցականը և սեռականը՝ յա-ով (երկար ի ձայնավորի համարժեքը). որը փոխարինում է և՛ քասրա-ին, և՛ ֆաթհա-ին (օրինակ faadiluuha-faadiliina): Վերոնշյալ անվանաձևերում ֆաթհա ցուցիչ կողմից նույն-ը (ճ ձայնորդի համարժեքը). որը հաջորդում է ուատ-ին կամ յա-ին. փաստորեն փոխարինում է եզակի անվան մեջ առկա թանուին-ին¹². Արտաքին կազմության արական հոգնակի կարող են լինել միայն.

1. արական անձնանունները. որոնց եզակին եռահոլով է և գերծ է իզականի թա-ից (թ բաղաձայնի համարժեքը) (օրինակ Haamidun-Haamiduuha)

2. արական շնչավոր ածականները. որոնց եզակին սովորաբար գերծ է լինում իզականի թա-ից և ընդհանուր է թե արական, թե՛ իզական սեռերի համար. կամ այն ածականները. որոնք դրված են գերադրական աստիճանով¹³ (օրինակ qaatibun-qaatibuuha, aqbaru-aqbaruuha):

Արականի կանոնավոր հոգնակիի ի՛րար-ով է իրացվում դրանց նմանվող հետևյալ 4 տեսակի անունների ի՛րար-ը.

1. հավաքական անունների հետևյալ հոգնակիները՝ uwsuu «aalamuuha» 20-90 թվականները

2. ներքին կազմավորման հետևյալ հոգնակիները՝ banuuha, haruuha «araduua», «sinuuha»

3. որոշ անունների հոգնակիները. որոնք ո՛չ արական շնչավոր անուն են. ո՛չ ածական. օրինակ՝ «waabiha»

4. եզակի թվում արտաքին կազմավորման հոգնակիի նմանությամբ կազմված որոշ անուններ. օրինակ՝ eilliyyuuha:

Հինգ անունների¹⁴ ուղղականը կազմվում է դամմա-ին փոխարինող ուատ հարֆ-ով. հայցականը՝ ֆաթհա-ին փոխարինող ալիֆ-ով.

սեռականը՝ քասրա-ին փոխարինող յա-ով: Սրանց ի՛րաք-ը իրացվում է հետևյալ 4 պայմանների դեպքում.

1. պետք է դրվեն եզակի թվով (օրինակ՝ *ʿabun*). երկակիի վերածվելու դեպքում կթեքվեն երկակիի ի՛րաք-ով (օրինակ՝ *ʿabawaanu*). արտաքին կազմադրյալ հոգնակի սնունդների նմանությամբ կազմվելու դեպքում (օրինակ՝ *ʿabusna*) կթեքվեն վերջիններիս ի՛րաք-ով. յսկ ներքին կազմավորման հոգնակի անունների նմանությամբ հոգնակիացվելու դեպքում (օրինակ՝ *ʿixwatun*) կթեքվեն ի՛րաք-ի երեք հիմնական ցուցիչների միջոցով.

2. չպետք է լինեն փառաբանական անուններ (օրինակ՝ *ʿubayyūn*). այս դեպքում ևս կթեքվեն անունների իառաք-ի երեք հիմնական ցուցիչների միջոցով.

3. պետք է լինեն մուդաֆ (օրինակ՝ *ʿabus Muhammadin*). եթե դադարեն գտնվել գեներտիվ կառույցի առաջին դիրքում (օրինակ՝ *ʿibnu. l. ʿaxi*), ապա նրանց ի՛րաք-ը կիրացվի երեք հիմնական ցուցիչների միջոցով.

4. պետք է դրանց՝ որպես գեներտիվ կառույցի առաջին դիրքում գտնվող անդամի /մուդաֆ-ի բաղադրիչը/ մուդաֆ իլեյի-ն չլինի խոստդի յա (ի) կցական դերանունը (օրինակ՝ *hamii*). այլապես ի՛րաք-ը կիրացվի խոստդի յա-ին նախորդող ենթադրյալ ցուցիչների միջոցով:

Հավելենք. որ Հինգ անուններից երեքի՝ *ʿabun*, *ʿaxun*, *hamun*, ի՛րաք-ը երեք տեսակի է.

1. ուաու, ալիֆ. յա հարֆ-երով իրացվող ի՛րաք.

2. միայն ալիֆ-ով իրացվող ի՛րաք /ուղղական. հայցական. սեռական հղովներում/.

3. անունների ի՛րաք-ի երեք հիմնական ցուցիչների միջոցով իրացվող ի՛րաք:

Եթե *fu*¹⁵ անունը վերափոխվում է *fa*ստ-ի, ապա նրա ի՛րաքը նույնպես իրացվում է երեք հիմնական ցուցիչների միջոցով. իսկ ծսս անվան ի՛րաք-ը չի իրացվում Հինգ անունների ի՛րաք-ով. եթե այն չի նշանակում տեր կամ ունեցող /*saahibun*/. իսկ եթե այն հաջորդող բաղադրիչի հետ կազմում է բաղադրյալ հատուկ անուն, ապա մաքնի /չթեքվող (օրինակ՝ ծսս *kaam*):

Հինգ բայաճներից յուրաքանչյուրը¹⁶ ներկա ժամանակի այն բայն է. որին կցված է երկակիի ալիֆ-ը. հոգնակիի ուաու-ն կամ խոսակցի յա-ն

(օրինակ՝ tadrusiina, tadrusaani, yadrusaani, tadrusuuna, yadrusuuna): Վերոհիշյալ բայաձևերի ուղղականը կազմվում է դամմա-ին փոխարինող կայուն մուն-ով. հայցականը և ջազմ-ը՝ մուն-ի սղմամբ:

Այսպես, դասական արաբերենի լեզվաբանական ավանդույթում ի՛րաբ-ի իրացումն ապահովող մու՛րաբ լեզվական միավորները 8 տեսակի են և թեքվում են *ցուցիչների* (4 տեսակի մու՛րաբ միավորներ) և *հարֆ-ների* (ևս 4 տեսակ) միջոցով:

EMMA KHACHATRYAN

(RA(S)U)

KINDS OF INFLECTING / MU'RAB LANGUAGE UNITS

"I'rab" forms from names in nominative, genitive and accusative cases and from verbs in nominative, genitive and "jasm" cases.

The above mentioned units are called "mu'rabs". They are those kinds of deflecting language units whose letter sound signs change depending on the place of the word in the sentence.

In the linguistic tradition of classic arabic language "mu'rabs" are declined in two ways:

1. by *signs* /4 kinds/,
2. by "*harfs*" /4 kinds/.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խաչատրյան Է., Ի՛րաբի շրջանակները դասական արաբերենի լեզվաբանական ավանդույթում. Մերձավոր Արևելք. հոդվածների ժողովածու. IV, Եր., 2007, էջ 132-134:
2. Խաչատրյան Է., Ի՛րաբի տեսակները և ցուցիչները. Մերձավոր Արևելք. հոդվածների ժողովածու. V, Եր., 2008, էջ 186-191:
3. Հարֆ արաբերենում նշանակում է մասնիկ. բաղադրիչ: Արաբերենում բառի կառուցվածքային բաղադրիչները ոչ թե առանձին հնչյուններն են, այլ բաղաձայն ու ձայնավոր հնչյունների նվազագույն գործառական զուգակցությունները՝ հարֆ-ները: Գաբուլյան Հ. Մ., Կարաբեկյան Ս. Բ., Գրական արաբերենի գործառական քերականություն, Եր., 2003, էջ 8:
4. Նասրա Սաիդ. Թայսիր ալ-ի՛րաբ. Հալեպ. 1965, էջ 55-59 (արաբերեն):
5. Մուհամմադ Ալ-Ամտաբի. Ալ-միհնաջ ֆի ալ-կառաիդ ուա ալ-ի՛րաբ. Բեյրութ. 1975, էջ 184-185 (արաբերեն):

6. Ըստ հատուկ անուններ, իրենց խորքում ունենալով որոշյալություն, հանդես են գալիս բանուին-ով, երբեմն էլ հատուկ անունների մի խումբ պահպանում է բանուին-ը որոշյալ վիճակի արտահայտման ժամանակ: Սանրամասն տե՛ս 'Իրանդե 1'. Մ Արաբական բանասիրություն, Սոսկվա, 1990, (ռուսերեն):
7. Արտաքին կազմավորման իգական հոգնակին կազմվում է բառավերջում ալիֆ և բա հարֆ-երի ավելացմամբ: Եթե հիշյալ անվանաձևերում բա-ն արմատական տառ է (օրինակ *banastun*), ապա հայցականը կազմվում է ֆաթհա-ով (այս դեպքում հոգնակին համարվում է ներքին կազմավորման հոգնակի): Տե՛ս Մուհամմադ Նուր Ալ-Դին Ալ-Տաուաշի, Քիբար ան-ճահու ուա աս-սարֆ ուա ալ-իմլա, Դամասկոս, 2001, էջ 46 (արաբերեն):
8. Օրինակ *Baraqaa*, կախված այն բանից, թե ուղղական հոլովում հանդես է գալիս մեկ քասրա-ով, բանուին դամա-ով, թե մեկ դամա-ով, ունենում է երեք տեսակի ի՛րար, ա. ուղղական, հայցական, սեռական հոլովներում քասրա-ն անփոփոխ է, ք. ուղղական, հայցական, սեռական հոլովները կազմվում են եռահոլով անունների ի՛րար-ի երեք հիմնական ցուցիչների միջոցով, գ. ուղղական, հայցական, սեռական հոլովները կազմվում են ձևաբանորեն արգելափակված անունների ի՛րար-ով: Տե՛ս Ալ-Սայյիդ Ահմադ Ալ-Հաշիմի, Ալ-կաուաիդ ալ-ասասիյյա լիլլուաբի Իլ-արաբիյա, (Լեյդոն, հիթրայի 1354, էջ 54 (արաբերեն):
9. Երկակիի ուղղականը կազմվում է բառավերջում ալիֆ-ի և նուն-ի ավելացմամբ, հայցականը և սեռականը՝ յա-ի և նուն-ի: Տե՛ս Հիսամ Ալ-Խատիբ, Ալ-լուաբու ալ-արաբիյա, 1-ին մաս, Հալեպ, 1986, էջ 15 (արաբերեն):
10. *Kilaa* և *kiltaa* անունները նմանվում են երկակիին միայն այն դեպքում, երբ ավելացվելով կցական դերանվանը՝ հանդես են գալիս գեներտիվ կառույցի 1-ին դիրքում որպես մուդաֆ: Ալ-Սայյիդ Ահմադ Ալ-Հաշիմի, նշվ. աշխ., էջ 57:
11. Սրանց ուղղականը կազմվում է բառավերջում ուաու-ի և նուն-ի ավելացմամբ, հայցականը՝ յա-ի և նուն-ի: Տե՛ս Հիսամ Ալ-Խատիբ, նշվ. աշխ., էջ 15-17:
12. Ըստ Ալ-Սայյիդ Ահմադ Ալ-Հաշիմի՝ նուն-ը, որը երկակի անուններում հաջորդում է սլիֆ-ին և յա-ին, փաստորեն փոխարինում է եզակի անվան մեջ առկա բանուին-ին (անորոշության նշան), դրա լավագույն ապացույցը գեներտիվ կառույցի /իդաֆայի 1-ին դիրքում գտնվող մուդաֆ-ի բանուին-ի սղումն է: Համաձայնե՛ք այդ պնդմանը, քանզի մուդաֆ-ը թեև 'al որոշիչ հող չի ունենում, բայց որոշյալություն է պարունակում: Դիցուք, երկակիի նուն-ը (ինչպես և արտաքին կազմավորման արական հոգնակիի նուն-ը) և եզակիի բանուին-ը ունեն նույն գործառույթը, սակայն չկա բավարար բացատրություն այն հանգամանքի առիթով, թե մուդաֆ-ի դիրքում չգտնվող որոշյալ առմաստ երկակի և արտաքին կազմավորման արական հոգնակի անուններում ինչո՞ւ է նուն-ը պահպանվում և՛ սլիֆ-ից, և՛ յա-ից հետո (այսինքն, օրինակ, որոշիչ-որոշյալ կապակցության կսզմում, որպես մուդաֆ իլիյի կամ լուանձին հանդես գալու պարագայում և այլն):
13. Հիշյալ պայմանից բացառվող անունների մասին տե՛ս Ալ-Սայյիդ Ահմադ Ալ-Հաշիմի, նշվ. աշխ., էջ 61:

14. Այ-Սալլիյոյ Ահմադ Այ-Հաշիմին Հինգ անունները ներկայացնում է որպես Վեց անուններ. Վեցերորդը հառստ բւտն է. որը նշանակում է իր սրա ի՛րաքն իրացվում է ուառու ալիֆի լա հւսրֆ-երի միջոցով. որոնք ավելւսնում են բառսովերջի նուե-ին: Տե՛ս Այ-Սալլիյոյ Ահմադ Այ-Հաշիմի. նշվ. աշխ.: էջ 63:
15. Բսս և Բսսսո անունները հոմանիշներ են. նշանակում են բերսն: Ենթադրվում է. որ Բսսո-ր կւսզմվել է Բսս-ին միմ հւսրֆի (մ ծւտնորդի համարժեքը) սվելացնելու միջոցով: Աբդ Ալլահ Այ-Բաւտառուի. Ուղ իլւս աւս-սիհաւ ալ-լուղսուիյա. Կահիրե 2004, էջ 70 (արաբերեն):
16. Աբու Բեքր Ալւս Աբդ Այ- Ալիմ. Դուրուս ֆի ալ-ի՛րւսք. Կահիրե 2002, էջ 56 (արաբերեն):